ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2016 թ. մարտի 30-ի նիստի

(արձանագրություն N 10)

Լսելով համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանի «Երիտասարդ մասնագետների պատրաստման գործընթացը Համալսարանում» զեկուցումը՝

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Դեկաններին և դեկանների տեղակալներին. ուսումնառության շրջանից սկսած՝ հետամուտ լինել և խիստ շեշտադրել ֆակուլտետներում ուսանողների օտար լեզվի և տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությանը՝ համալսարանի միջազգայնացման և սկսնակ երիտասարդ մասնագետների պատրաստման գործընթացում:
2. Ամբիոնի վարիչներին. մասնագիտական կադրերի երիտասարդացման նպատակով դեռևս մագիստրոսական կրթության շրջանից օրինակելի և բարձր գիտականություն դրսևորող մագիստրոսներին մոտիվացնել՝ հետագայում գիտամանկավարժական աշխատանքով զբաղվելուն:
3. Լաբորատորիաների վարիչներին. բոլոր տեսակի գիտական ծրագրերում որպես պարտադիր պայման ընդգրկել երիտասարդ խոստումնալից մասնագետներին:
4. Կարիերայի կենտրոնի աշխատակիցներին. մշտադիտարկման արդյունքում լավագույն մագիստրոսներին կողմնորոշել դեպի գիտամանկավարժական գործունեության:
5. Գիտահետազոտական կենտրոնի աշխատակիցներին. որպես առաջնահերթություն՝ բոլոր տեսակի գրանտային ծրագրերում ներառել երիտասարդ մասնագետներին:
6. Մասնագիտական վերապատրաստումների մասնագետներին. վերապատրաստման գործընթացին պարբերաբար ներառել երիտասարդ հետազոտողներին, իսկ անհրաժեշտության դեպքում վերադրակավորել նոր պահանջներին համահունչ:
7. Համալսարանի բոլոր ստորաբաժանումների ներկայացուցիչներին. պլանավորել սերունդների հերթագայման բնականոն գործընթացը՝ առավել գրավիչ դարձնելով մանկավարժ-գիտնականի մասնագիտությունը:
8. Կրթության բարեփոխումների և որակի ապահովման վարչությանը. բոլոր ստորաբաժանումներում կիրառել PDCA գործիքակազմը:
9. Գործընթացի պատասխանատվությունը և հսկողությունը վերապահել ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանին, ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռուբեն Միրզախանյան